



25 (180). ԴԱՎԻԹ ԶՈՒԿ ԿԸ ԲՈՒՆԵ

Դավիթ ճիժ կէղնի, կէրթա հըտ յընկերաանց ճան, հոլ, պալ-
աըվոցի խաղա, օրնն մեկ-էրկուսի կը նեղե-ծեծե, պապեր ուրանց
գիկան մրա Մհեր գանդաս:

— Մհեր, խորրան, հմլա շ.լնի, Դավիթ մեր ճըժկնկրուն օր
չի տա:

Մհեր կըսե.

— Ես լե գինամ՝ չի տա. կը խրատիմ, գանկաջ կը քաշիմ, կը
ծեծիմ, հմա շորկող է, յա ընդրա գլխուն իս ավետրան կարդըցի,
յա գիլու:

— Ըպա ի՞մալ կէղնի:

— Ի՞մալ սլտի էղնի. ճըղի իրավունք է՝ գացեք, դարկեք-
սպանեք, յա թե չէ՝ սարր սլտի էնիք հարի մեծնա՝ ուր ծոութենի
թարկ տա:

— Օղորմի Սանեսարին. օղս՛րդ կըսիս,—կըսին քաղքըցիք,
դառնան գիկան ուրանց տներ: Խել մե գընցնա, օղորդ օր՝ Մհեր
իմալ ըսեր էր, հմալ կէղնի: Դավիթ օր կը դառնա տաս-տըսվերկու
տարեկան՝ կը խելըցվորի, չը նեղե ու ծեծե ուր չընկերաանց, չըմնօր
կը քոմե տանե Սասմա քաղքի մայդան՝ ճան, հոլ, պալտըվոցի կը
խաղան, յա կէրթան սար՝ ալուճ, ըղինջք, քարջին կը քաղին, յա դիշ-
նան Մեղրագետ՝ լողկնան, ուրախ-դուրախ գիկան տուն:

Քաղքըցիք կը զարմանան.

— Վոլա, — կըսին, — մեր Դավիթ խելըցվորեր է, յեկնանք խիլ
մե չքունք ի պատ:

Ժամանակ մե գընցնա, Դավիթ կը դառնա տըսնուհինգ-տըս-

նույնպէս տարեկան: Դավիթ մ'ըստի, պալ մե ըսե: Բաժ կըսիս՝ բարդի, չեքես կըսիս՝ կլոր լուանակ, թեքեր ուրին՝ լարուկ ճոպան: Մա՞րդ կոնա կանի ուր դեմ, հեղ մե փշե, կանուկն հարիր քելք կը թոնա դեն: Խորրան իմ Դավիթին, քանի կուժովներ՝ էն խըդար լե ճժուկեն կը թորկեր. անկաջն ի խոսք՝ կը լսեր պապուն ու մամուն, հոխպըրտոց ու քեռեստանուն: Մհեր կուրախնա վըր տղին.

— Վուլա իմ Դավիթ խելըցվորեր է, օր մեռնիմ՝ ընի իմ տեղ կը բոնե, փա՞ռք քըղի, Սասմա՛ աստված:

Օր մե Դավիթ էլման ղտղեկներ կը քոմե, գիջնան Մեղրագետ՝ լողկնան: Շոգ օր կէղնի, մեկ կը լողկնան, մեկ գեղնան պարկին վըր ավղին: Ճաշի վախտ՝ կանոթնան:

— Չէրթա՞նք տուն,— կրսին տղեկներ:

— Չէ,— կըսե Դավիթ,— քիչ մը լե մնանք, չետև:

Տղեկներ պարկուկ կը մնան վըր ավղին, Դավիթ կը մտնա ջուր, քիչ մե խորունդ օր կէրթա՛ կը տեսնա հանդե ջրի չերես չելավ սեչուշայ ձուկ մե, սըկավ, գպոչ քանիմ՝ հեղ խաղցուց, փաթ մե էրկու տվեց Դավիթի բուլոր, պոչով հմալ զարկեց, քիչ մներ գտղեն շրջեր մըջ ջրին: Դավիթի շոք ցավաց, հըմա շընկավ մըջ ջրին: Ձուկն էլման տաղլա տվեց, գետ կիսվավ, էկավ չիրար, ձուկն չուղեց մեկ լե զարկե՛ Դավիթն էրկու ձեռք մտուց մըջ խոհկներուն, բանձըրցուց, լորտեց վըր ավղին: Տղեկներ ճվալով փախան, Դավիթ ծիծղաց, չելավ ջրից, տեսավ վըր ավղին ձուկ կը թփրտա, ավաղ դեսդեն կը թալե, կը շրջվի մեջքին, փորին, գուգե ուրին թալե ջուր, շըմքի ընդրա կենդանութեն ջուրն է. Դավիթ դոտք կը դնե գլխուն, ձուկ սունչ կը փշե:

— Տղեկներ՛ր,— կը բոռա Դավիթ,— մո՛տ արեք, մը վա՛խենեք, չըսօր հմալ ճաշ մ'էնինք, օր աշխար չը տեսի՛:

Տղեկներ գիկան տեսնան՝ ձուկ չէ, գմեջ մե:

Դավիթ կըսե.

— Թըղ ձըզնե մեկ վաղե իգա դաշտի գեղ, բոլումա լոշ բերե, փաթինք մեջն, ուտինք: Գլգըլ հացով համով չէղնի:

Կը տեսնա մարդ ժաժ չի գա տեղեն: Ո՛ն էրթա, ո՛ն չէրթա, էլման Դավիթ պտի էրթա: Կը վազե մտնա գեղ, կը տեսնա վըր դռան շեմքին կնիկ մե նստուկ՝ քարման կը մանե:

— Բարև, տա՛դո,— կըսե Դավիթ:

— Բարին արևուդ, տղա՛, չորի՞ն հմալ կը հեաս:

— Տա՛դո,— կըսե Դավիթ,— ընձի լո՛շ տու, տանիմ տղեկներ ուտին, անոթի ին:

— Տաղսն մեռնի քրդի, էրթանք մառան, ինչ խրդար Կուդիս՝
վերցու:

Դավիթ դեվարեա մե լոշ կը վերցու, կը դնե փիջանուն, քանիմ՝
շննք կէնե, կը հառնի աղեկներուն: Գեղնան փեա-մեղ, խրքշ-մրքշ
կը ժողովին, դեղին, կը ալ կիտան, դձուկ կը դնին վրեն՝ խորվի, կը
նստին օր անուշ էնին, Դավիթ կը սե:

— Սառմա անոթի՛ք, սա՛րը էրեք:

Տղեկներ թուք ուրանց կը կլտն, Դավիթն էրկու ձեռ կը դնե վըր
բերնեղրին՝ կը բոռա դաշտով մեկ:

— Շինական քաղվորեն՛ը, աբեք չողա՝ ձո՛ւկ ուտինք:

Գիկան, աղեկներու հեա կը նստին, կուտին, զրեբան ուրանց
կը սրբին, օրշնեթք կիտան Դավթի յոթ պապուն, կէրթան ուրանց
Կործին:

էդ բան օր կը լսին Սասմա քաղքըցիք, կը սին:

— Վսլա մեր Դավիթ խելըցվորե՛ր է, դՄհերի տեղ կը բոնե՛:
էդ օրվընե Դավիթ կը բոնե Մհերի տեղ:

